DASH

DASH ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ

2002թ. գարնանը մենք ներմուծեցինք DASH հարցարանի հաշվարկման նոր մեթոդ: Այս մեթոդը նախնականի **հանրահաշվական համազորն է,** բայց ավելի հեշտ է, ավելի արդյունավետ և դյուրին օգտագործվող բացակայող տվյալների դեպքում: Այս պատճառներով մենք խորհուրդ ենք տալիս օգտվել այս վերանայված մեթոդից: Ինչևէ, կարևոր չէ, թե որ մեթոդն եք օգտագործում, քանի որ ի վերջո կստանաք նույն արդյունքը: DASH-ը հաշվարկվում է 2 բաղադրիչով՝ անկարողության/ սիմպտոմների հարցեր (30 կետ, 15 միավոր) և ընտրողական ակտիվ սպորտաձևերի/երաժիշտների կամ աշխատանքի բաժինը (4 կետ, 15 միավոր):

Անկարողության/սիմպտոմների գնահատական

30 կետից առնվազն 27-ը պետք է լրացված լինեն, որպեսզի կարելի լինի հաշվել միավորը: Բոլոր լրացված պատասխաններին տրված գնահատականները պարզապես գումարվում և միջինացվում են՝ առաջացնելով 5 բալանոց միավոր: Այս գնահատականն այնուհետև վերափոխում են 100 բալանոց միավորի՝ հանելով 1 և բազմապատկելով 25-ով: Այս վերափոխումն արվում է, որպեսզի ավելի դյուրին լինի համեմատել 0-100 բալանի այլ սանդղակների հետ: Ավելի բարձր գնահատականը նշանակում է ավելի մեծ անկարողություն:

DASH-անկարողության/սիմպտոմների գնահատական =

$$\left(\frac{[\text{n պատասխանների գումար}]}{\text{n}} - 1\right) \times 25$$

, որտեղ n-ը հավասար է լրացված պատասխանների քանակին:

Ընտրողական բաժիններ (ակտիվ սպորտաձևերի/երաժիշտների կամ աշխատանքի)

Յուրաքանչյուր ընտրողական բաժինը կազմված է 4 կետերից, որոնք կարող են կամ չեն կարող օգտագործվել անհատների կողմից՝ հարցերի բնույթից կախված: Ընտրողական բաժինների նպատակն է որոշել պրոֆեսիոնալ աթլետների/արվեստագետների կամ այլ խմբերի յուրահատուկ դժվարությունները, որոնք հնարավոր է չխանգարեն նրանց ամենօրյա կենսագործունեությանը և, հետևաբար, մնան "չպարզված" DASH-ի 30-կետանոց բաժնում:

Վերևում նկարագրված նույն գործողությունը կատարում են ընտրողական 4-կետանոց բաժնի գնահատականը հաշվելու համար: Ընդ որում պետք է բոլոր 4 հարցերն էլ պատասխանված լինեն: Բոլոր լրացված պատասխաններին տրված գնահատականները պարզապես գումարում և բաժանում են 4-ի (կետերի թիվը), հանում 1 և բազմապատկում 25-ով՝ 100-բալանի սանդղակով գնահատական ստանալու համար:

Չլրացված կետեր

Եթե պատասխանողի կողմից կետերի 10%-ից ավելին (այսինքն, ավելի քան 3 կետ) թողնվում են անպատասխան, ապա անհնար է հաշվել DASH-անկարողության/սիմպտոմների գնահատականը: Միևնույն կանոնի համաձայն (այսինքն, եթե կետերի 10%-ից ավելին թողնվել է դատարկ), ընտրողական բաժիններում անպատասխան կետեր պետք է չմնան, քանզի դրանք կազմված են միայն 4 կետերից: Բացակայող տվյալների այս "կանոնը" գործում է ինչպես նախնական, այնպես էլ վերանայված հաշվման մեթոդների համար:

© Institute for Work & Health 2006. All rights reserved.
Armenian translation courtesy of Davit O. Abrahamyan MD, PhD and Gevorg Yaghjyan MD, PhD,
Plastic Reconstructive Surgery & Microsurgery Center, University Hospital No 1. Yerevan, Armenia